ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ,
ՀՊՏՀ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *արտագաղթ, աշխատանքային միգրացիա, տրանսֆերտներ, զուտ ուղևորահոսքեր, օտարերկրյա ուղղակի ներդրումներ*

Համաշխարհային տնտեսության գլոբալացման արդի փուլում քաղաքակրթության առաջընթացն ուղեկցվում է բնակչության ներպետական և միջպետական տեղաշարժերով, որոնց պատճառներն են գործազրկությունը, աղքատությունը, սովը, աշխարհաքաղաքական անկայուն վիճակը, պատերազմները, շրջակա միջավայրի խաթարումները և այլն:

Հայաստանը ևս համաշխարհային միգրացիոն գործընթացների ակտիվ մասնակից է, որտեղ անկախացումից հետո հայրենիքը լքածների թիվը հասնում է 900.000-ի: Սա ենթադրում է, որ խնդրի լուծումը և աշխատանքային միգրացիան արտագաղթի չվերածելու անհրաժեշտությունը պահանջում են նոր համալիր լուծումներ, արտագաղթի և միգրացիայի պատճառների խորքային վերլուծությունների իրականացում և արտագաղթը զսպող իրավիճակի ձևավորում երկրի ներսում, ինչը իսկապես բարդագույն խնդիր է:

Արդի պայմաններում գլոբալ տնտեսությունում հասարակության առաջընթացն առաջադրում է այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են տնտեսական ճգնաժամերը, գործազրկությունը, աղքատությունը, սովը, պատերազմները, բնական աղետները, աշխարհաքաղաքական անկայունությունը և այլն, որոնք էլ հանգեցնում են բնակչության միգրացիոն տեղաշարժերի աճին և բազմազանեցմանը: Զարգացող տնտեսություններում էլ ծերացող հասարակությունն ու աշխատուժի կրճատումն են աշխատուժի միգրացիայի տեմպերի արագացման պատճառ դարձել:

Վերջին 15 տարվա ընթացքում աշխարհում միգրանտների թիվը կտրուկ աճել է՝ 2015 թվականին հասնելով 244 միլիոնի: Եթե 2000 թ. ցուցանիշը 173 միլիոն էր, 2010 թ.՝ 222 միլիոն[1], ապա 2013 թ. աշխարհում միգրանտների թիվը կազմում էր 247 միլիոն կամ աշխարհի բնակչության 3,4 տոկոսը[2] (ըստ աշխատանքի միջազգային կազմակերպության գնահատականների՝ 232 միլիոն, որից 150,3 միլիոնը միգրանտ աշխատողներ՝ աշխատունակ տարիքի միգրանտ բնակչության գրեթե 73 տոկոսը[3]): Ընդհանուր առմամբ, 2010–2015 թթ. միգրանտների թիվն աճել է տարեկան 1,9 տոկոսով:

Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության՝ Մեքսիկա–ԱՄՆ միգրացիոն միջանցքն ամենամեծն է աշխարհում՝ 2015 թվականին հաշվվելով 12 միլիոն միգրանտ: Ռու-

[1] International Migration Report 2015, Highlights, United Nations, New York, 2016, p. 5.
[2] World Bank Group, Migration and Remittances Factbook 2016, third edition, xi.
[3] ILO Global Estimates on Migrant Workers, Results and Methodology, Special Focus on Domestic Workers, 2015, p.5.

սաստան-Ուկրաինան երկրորդ ամենախոշորն է, որին հաջորդում են Ուկրաինա-Ռուսաստանը և Բանգլադեշ-Հնդկաստանը[1]:

Հայաստանը նույնպես ակտիվորեն ներգրավված է միջազգային միգրացիոն գործընթացներում (հայկական սփյուռքն աշխարհում հասնում է 8 միլիոնի[2]): Անկախությունից հետո, 1991–1995 թթ. ընթացքում արտագաղթի պատճառով Հայաստանը կորցրեց իր բնակչության 17 տոկոսը. ավելի քան 610.000 մարդ (յուրաքանչյուր 5-րդ քաղաքացին) անվերադարձ լքեց ՀՀ-ն, որի 50 տոկոսը աշխատանքային միգրանտներ էին[3]: 1995-2001 թթ. Հայաստանը լքել է ևս 600.000 մարդ: Այդ նույն ժամանակահատվածում թեպետ 350.000 մարդ վերադարձել է հայրենիք, սակայն բնակչության թիվն այդ ժամանակահատվածում նվազել է ևս 250.000-ով (բնակչության 8%-ը): Միգրացիոն հոսքերի այսպիսի փոփոխությունը մասամբ պայմանավորված էր երկրում սոցիալ-տնտեսական վիճակի աստիճանական կայունացմամբ, ինչպես նաև Ռուսաստանի կողմից ավելի կոշտ ներգաղթի քաղաքականության իրականացմամբ: Այս փուլի առանձնահատկությունն այն է, որ արտագաղթած բնակչության գրեթե 60 տոկոսն ունեցել է միջինից բարձր կրթություն, և տնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ արտագաղթը կերպափոխվել է ընտանիքի վերամիավորման պահանջի:

Համաշխարհային բանկի կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ 2013 թվականին հայ միգրանտների թիվն աշխարհում կազմել է 785.700 մարդ՝ ամբողջ բնակչության 26,3 տոկոսը, իսկ Հայաստանն ըստ արտագաղթի ծավալների (բնակչության թվաքանակի նկատմամբ)՝ աշխարհում 30-րդ երկիրն է[4]: Ըստ ՀՀ միգրացիոն պետական ծառայության վիճակագրության՝ 2014–2016 թթ. հանրապետության սահմանները լքել է ևս 133.300 մարդ:[5]

Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից Հայաստանից արտագաղթի պատճառների ուսումնասիրությունները[6] ցույց են տալիս, որ աշխատուժի միգրացիայի գլխավոր պատճառը աշխատատեղերի բացակայությունն է (անկախ նրանից՝ դա վերաբերվում է կայուն, լավ վճարվող, թե ցանկացած աշխատանքի): Այս համատեքստում արժե նշել, որ հետանկախացման տարիները մեր երկրի համար իրավամբ կարելի է համարել աշխատանքային միգրացիայի ժամանակաշրջան. 1991–2002 թթ. տնտեսությունում գործազրկության մակարդակը շարունակական աճի միտում է դրսևորել՝ 2002 թվականին հասնելով 10,8%-ի, որից հետո սկսել է դանդաղ նվազել՝ 2005 թ. հասնելով 8,2 տոկոսի, որով էլ պայմանավորված է եղել երկրորդ փուլում արտագաղթի տեմպերի կրճատումը: 2010–2016 թթ. աշխատանքային ռեսուրսների քանակը տնտեսությունում կրճատվել է 15,8 տոկոսով, սակայն գործազրկության մակարդակը նվազել է ընդամենը 1

---

[1] International Migration Report 2015, Highlights, United Nations, New York, 2016, p. 19.

[2] Migration and Skills in Armenia, Results of The 2011/2012 Migration Survey on the Relationship Between Skills, Migration and Development, p. 4.

[3] UNDP Armenia, 2009, p. 39.

[4] World Bank Group, Migration and Remittances Factbook 2016, third edition, p. 4:

[5] http://www.smsmta.am/?menu_id=18

[6] Migration and Development. Armenia Country Study, ILO, 2009.

տոկոսային կետով (2010–2013 թթ. նվազել է՝ 19,4%-ից դառնալով 16,2%, սակայն 2013–2016 թթ. աճել է մինչև 18%)[1]: 2011–2012 թթ. ընթացքում Կովկասյան հետազոտությունների կենտրոնի կողմից 4025 հավանական և վերադարձած միգրանտների շրջանում իրականացրած հետազոտության համաձայն՝ հարցված տղամարդկանց 42%-ը և կանանց 32%-ը արտագաղթելու հստակ մտադրություն են հայտնել[2]:

Այնուամենայնիվ, կան նաև հայերի միգրացիոն ակտիվության այլ պատճառներ: Դրանցից մեկը «խոպանի» ավանդույթն է. գյուղական շրջաններում երիտասարդներն առանձնակի ջանքեր չեն գործադրում Հայաստանում աշխատանք գտնելու ուղղությամբ. նրանք պարզապես մեկնում են հայրենիքից, ինչպես նախկինում իրենց ծնողները: Գյուղական շրջանների երիտասարդների համար արտագաղթի հաջորդ պատճառն ավելի մշակութային և սոցիալապես ակտիվ միջավայրում ապրելն է: Այնուամենայնիվ, կարճ ժամանակ մարզային կենտրոններում, ապա Երևանում ապրելուց հետո նրանք հասկանում են, որ Ռուսաստան մեկնելը՝ որպես ապրուստ վաստակելու տարբերակ, միակ այլընտրանքն է:

Հաջորդ պատճառը, որն ազդում է հայրենիքը լքելու և նրա սահմաններից դուրս աշխատանք փնտրելու որոշման վրա, ներդրումներ իրականացնելու կամ լրացուցիչ ծախսերը փոխհատուցելու անհրաժեշտությունն է (օրինակ՝ երեխաների կրկնուսույցի, բուհի ուսման, բնակարանի/տան վերանորոգման ծախսերը, սեփական բիզնեսը սկսելու համար պահանջվող ներդրումները և այլն): Հետաքրքրական է այն փաստը, որ յուրաքանչյուր 4-րդ միգրանտը պլանավորում է գումար վաստակել տունը վերանորոգելու, իսկ յուրաքանչյուր 5-րդը՝ երեխաների կրթության ծախսերը հոգալու կամ երկարաժամկետ օգտագործման ապրանքներ (կահույք, տեխնիկա) ձեռք բերելու համար:

ՀՀ ուղևորահոսքերի աշխարհագրությունը վկայում է, որ արտագաղթի գլխավոր նպատակային երկիր շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը, որին ուղևորահոսքերի քանակով հաջորդում են Իրանի Իսլամական Հանրապետությունը, Միացյալ Նահանգները, Ուկրաինան, ապա եվրոպական տարածաշրջանի երկրները[3]:

Տնտեսության վրա արտագաղթի դրական հետևանքներն ուսումնասիրող որոշ հետազոտողներ պնդում են, որ աշխատուժի միգրացիայի հետևանքով մարդկային կապիտալի ցանկացած կորուստ փոխհատուցվում է տրանսֆերտներից ստացվող օգուտների հաշվին, քանի որ դրանք մեծացնում են սպառման հակումը տնտեսությունում, ինչն էլ, բազմապատկչի էֆեկտի համաձայն, ազդում է ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալի վրա, հետևաբար՝ ստեղծվում են լրացուցիչ աշխատատեղեր և եկամուտներ մյուսների համար, որոնց լրացուցիչ ծախսերը ստեղծում են եկամուտներ մյուսների համար և այդպես շարունակ:

Ըստ Ադամսի և Փեյջի իրականացրած հետազոտության՝ աշխատուժի միջազգային

---

[1] ՀՀ ԱՎԾ, Ազգային վիճակագրական տարեգիրք 2016:

[2] Migration and Skills in Armenia, Results of The 2011/2012 Migration Survey on the Relationship Between Skills, Migration and Development, p. 32.

[3] ՀՀ ԱՎԾ, Ազգային վիճակագրական տարեգիրք 2015, 2016:

միգրացիան և միջազգային դրամական փոխանցումները նպաստում են աղքատության կրճատմանը հետևյալ ուղղություններով.[1]

1. Երկրի բնակչության կազմում միջազգային միգրանտների տեսակարար կշռի (երկրի բնակչության այն մասը, որը գտնվում է արտերկրում) 10% աճը նպաստում է երկրում աղքատության մակարդակի 1,6% կրճատմանը:
2. ՀՆԱ-ում միջազգային դրամական փոխանցումների տեսակարար կշռի 10% աճը հանգեցնում է օրական 1 ԱՄՆ դոլարով ապրող մարդկանց տեսակարար կշռի 1,2% կրճատման:

Այս խնդրի առնչությամբ ԱՎԾ վերլուծությունները փաստում են[2], որ Հայաստանից դուրս միգրացիայում գտնվող անդամներ ունեցող տնային տնտեսությունները շուրջ 22 տոկոսով ավելի բարձր սպառման ցուցանիշ ունեն այն տնային տնտեսությունների համեմատ, որոնցում միգրանտներ չեն եղել: Սա կապված է նրա հետ, որ ստացվող տրանսֆերտները հիմնականում նպատակաուղղվում են մասնավոր սպառմանը: Մասնավորապես՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ ՀՀ-ում իրականացրած հետազոտության արդյունքները փաստում են, որ արտերկրից տրանսֆերտներ ստացող տնային տնտեսությունների 80 տոկոսը ստացվածի 90 տոկոսից ավելին ծախսում է սպառողական ապրանքների ձեռքբերման վրա[3]:

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ շատ քիչ երկրների է հաջողվել իրենց քաղաքացիների դրամական տրանսֆերտների հաշվին խթանել գործարար ակտիվությունը տնտեսությունում: Ավելին, Հայաստանում 2004–2008 թթ. ժամանակահատվածում մասնավոր տրանսֆերտների և ՕՈՒՆ աճի խթանման վրա կառուցված աճի մոդելը հետագայում դարձել է մեր տնտեսության խոցելի կողմերից մեկը, քանի որ այն հիմնականում խթանել է ոչ թե ներքին արտադրությունը, այլ ներմուծումը (ըստ պաշտոնական վիճակագրության՝ այդ ժամանակահատվածում ՀՀ-ում ներմուծումն ավելացել է շուրջ 4 անգամ): Փաստացի, ներկայում էլ ՀՀ կառավարության՝ տնտեսական աճի ու մասնավոր հատվածում սպառման կանխատեսումներում առանցքային տեղ է հատկացվում արտերկրից դրամական փոխանցումների կանխատեսվող հոսքերին:

Ըստ Համաշխարհային բանկի վիճակագրության՝ 2015 թ. համաշխարհային տրանսֆերտները գերազանցել են 601 միլիարդ դոլարը, որից 441 միլիարդն ուղղվել է դեպի զարգացող երկրներ, որը 3 անգամ գերազանցում է այդ երկրների զարգացման պաշտոնական օժանդակությունների ծավալը[4]: Հատկանշական է, որ տրանսֆերտների իրական ծավալը, այդ թվում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական ուղիներով չգրանցված հոսքերը նշանակալիորեն ավելի մեծ են եղել: 2015 թ. երրորդ քառորդում դրամական փո-

---

[1] Adams R. Jr., Page J., The Impact of International Migration and Remittances on Poverty, Paper Prepared for the DFID/World Bank Conference on Migrant Remittances, London, 9-10 Oct., 2003.

[2] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական-վերլուծական զեկույց, Եր., 2013:

[3] Migration and Skills in Armenia, Results of The 2011/2012 Migration Survey on the Relationship Between Skills, Migration and Development, p. 15:

[4] World Bank Group, Migration and Remittances Factbook 2016, third edition, xii.

խանցումների արժեքն աշխարհում մոտավորապես 8% է, որը 5%-ով գերազանցել է կայուն զարգացման նպատակներով սահմանված թիրախային ցուցանիշը՝ 5%-ը[1]:

Ըստ նույն հետազոտության արդյունքների՝ 2014 թ. Հայաստանը ամենաշատ տրանսֆերտներ ստացող 10-րդ երկիրն էր աշխարհում՝ 2,1 միլիարդ դոլար կամ ՀՆԱ 17,9 տոկոսը: Նույն ժամանակաշրջանում, որպես տրանսֆերտներ իրականացնող երկիր, Հայաստանը զբաղեցրել է 7-րդ հորիզոնականը՝ 0,4 միլիարդ դոլարով, որը կազմել է ՀՆԱ 3,4%-ը: 2015 թ. դեպի Հայաստան կատարվող տրանսֆերտները նվազել են մինչև 1,7 միլիարդ դոլար[2]: Ըստ ՀՀ ԿԲ-ի՝ 2016 թ. դեպի ՀՀ մասնավոր տրանսֆերտները նվազել են 6%-ով, սակայն Հայաստանից դեպի այլ երկրներ իրականացվող փոխանցումներն աճել են 7,36%-ով՝ կազմելով 816,9 միլիոն դոլար: Արդյունքում, զուտ ներհոսքը նվազել է 17,7%-ով: Հայտնի է, որ դեպի Հայաստան մասնավոր տրանսֆերտների գրեթե 80%-ը գալիս է Ռուսաստանի Դաշնությունից, իսկ 2014 թվականից սկսած՝ դրանց կրճատումը (վերոնշյալ ցուցանիշը նվազել է մինչև 60%) պայմանավորված էր ռուսական ռուբլու արժեզրկմամբ և Ռուսաստանում տնտեսական իրավիճակի վատթարացմամբ:

Ակնհայտ է, որ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները և հետանկախացման շրջանում միգրացիոն հոսքերում մնացած (ՀՀ չվերադարձած)՝ ՀՀ նախկին քաղաքացիների ձևավորած «նոր սփյուռքի» կողմից ՀՀ-ին ցուցաբերվող օժանդակությունը[3] զգալի ազդեցություն ունեն Հայաստանում տնտեսական ակտիվության ապահովման, ինչպես նաև տարաբնույթ սոցիալական խնդիրների լուծման գործում: Սակայն, աշխատանքային միգրացիայով գեներացվող գործընթացների և դրանց արդյունքում միգրացիոն հոսքերով չվերադարձողների կրիտիկական մեծ զանգվածը նաև զգալի խնդիրներ են առաջադրում մեր տնտեսությանը: Դրանց շարքում առավել հատկանշականներն են տնտեսությունում սպառման ծավալների զգալի կրճատումը և ուղեղների արտահոսքը, որոնք ՀՀ ազգային անվտանգության ապահովման առանցքային խնդիրներից են:

ТАТЕВИК МКРТЧЯН

ПРОБЛЕМЫ МИГРАЦИИ В РА

Ключевые слова: *эммиграция, миграция труда, трансферты, чистые пассажиропотоки, иностранные прямые инвестиции*

В период глобализации мировой экономики прогресс цивилизации сопровождается миграцией населения, причинами которой являются безработица, бедность, голод, геополитическая нестабильность, войны, деградация окружающей среды и т.д.

---

[1] Տե՛ս նույն տեղը:

[2] World Bank Group, Migration and Remittances Factbook 2016, third edition, p. 28:

[3] Դա դրսևորվում է տարաբնույթ բարեգործական հիմնադրամների ֆինանսավորմամբ, անձնապես իրականացվող բարեգործությամբ, տարաբնույթ ենթակառուցվածքների ձևավորման աշխատանքների ֆինանսավորմամբ և ՀՀ տնտեսությունում իրականացվող կապիտալ ներդրումներով:

Армения тоже активный участник в мировых миграционных процессов, где в период пост независимости государства число людей покинувших родину достигает 900.000 человек. Это предполагает, что решение проблемы и необходимость не превращения миграции в эмиграцию принуждают найти новые комплексные решения, что в свою очередь принуждает проведение глубокого анализа причин миграции и формирование ситуации сдерживающей эмиграцию, которая по настоящему труднейшая задача.

TATEVIK MKRTCHYAN

MIGRATION ISSUES IN RA

Key words: *emigration, labor migration, remittances, net passenger flows, foreign direct investments*

At the current stage of globalization of the world economy the progress of civilization is followed by the population migration which is the result of unemployment, poverty, hunger, geopolitical instability, wars, degradation of environment, etc.

Armenia is also an active participant in world migratory processes where after independence the number of the people who left their motherland reaches 900.000 people. It assumes that the solution and need not to transform the migration into emigration require new complex decisions that in turn requires carrying out deep analysis of the reasons of migration and formation of emigration constraining situation, which is a very difficult task for the present time.

ԱՐՓԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *շերտավորում, կենսամակարդակ, գործոններ, տնտեսապես ակտիվ, հիմնախնդիր, աղքատություն, բարեկեցություն*

Հոդվածում առանձնացրել և ուսումնասիրել ենք ՀՀ բնակչության շերտավորումն ըստ տնտեսական ակտիվության, մասնավորապես՝ տնտեսապես ակտիվ բնակչությունն ըստ զբաղվածների և գործազուրկների, իսկ զբաղվածներին էլ տարանջատելով ըստ վարձու աշխատողների, գործատուների, ինքնազբաղվածների և այլն: Որոշակի տեղ ենք հատկացրել նաև տնտեսապես ակտիվ բնակչության շերտավորմանն ըստ կրթական մակարդակի, տնտեսական գործունեության տեսակների, հատվածների: Բնակչության շերտավորման գնահատման առումով, հատկապես կարևորել ենք բնակչության եկամուտների և ծախսերի ուսումնասիրությունն ըստ քվինտիլային և դեցիլային խմբերի:

Բնակչության շերտավորումը, որպես համամարդկային կարևորագույն հիմնախնդիր, դեռևս պահպանում է իր արդիականությունը, որը, սակայն, տարբեր երկրներում